## ԿԱԶՄԱԽՈՍԱԿԱՆ ԳԱՎԱՌԻԿ ԲԱՌԵՐ

1. Դափ—*կուրծք (մարդու)։*
2. Դնդեղ *կամ* կակղաճ—*փափուկ միս։*
3. Թելցաճf—*խնձորը գավակոսկրին միացնող ջիղը։*
4. Թուքակ—*սրունքը ծածկող փափուկ միսը։*
5. Թունուն—*թռչունների որկորը, որտեղ կերածն է հավաքվում՝ աղիքների մեջ անցնելուց առաջ։*
6. Իrիկամ—*երիկամունք։*
7. Լուստուն—*բիր։*
8. Խլըլեկ—*դաստակ։*
9. Խնձorուկ—*ազդոսկրի կլորակ գլուխը։*
10. Խոխ—*գանգ (անասունների)։*
11. Խոտկուլ—*թռչունների որկոր։*
12. Խոընչուկ—*քթի կրճիկային միջնորմը։*
13. Խուռլակ—*կոկորդ։*
14. Ծնամաճ—*արգանդ (անասունների)։*
15. Կոճկf—*կեռացած մեկ թաթը։*
16. Կուռf—*կուրծք (անասունների)։*
17. Հազarթerթիկ—*ստամոքսի ծալ-ծալ թերթիկները։*
18. Հarամաղիf—*հաստ աղիք (անասունների)։*
19. Հոզեռուն—*գանգոսկրների միացման տեղը, ճակատի վերևը, որ մանկության ժամանակ փափուկ է լինում։*
20. Ձուկ—*մսի մկանունք։*
21. Ճաճկ—*երկու կուցքի միացումը։*
22. Ճիլա—*սրունքի ոսկորն առանց մսի։*
23. Ճուռ—*զիստը՝ ծնկից մինչև ազդրագլուխը։*
24. Մոխraյճեղ—*փոքրիկ պճեղներ՝ կճղակների ետևի կողմը։*
25. Մոմըf—*վեգ-ոսկորների մոտ գտնված փոքր ոսկորները։*
26. Յաճթեռակ—*անութ, ընդ անութ։*
27. Յաճկըջկոթ—*քունք։*
28. Նուռf—*անասունների կրծքի ստորին մասը, որտեղ ծծերն են ու պտուկները։*
29. Շaroղ—*ողնաշար։*
30. Շլըf—*ծոծրակի վերևի մասը՝ շլինք։*
31. Պառեկ—*քամակ, մեջք։*
32. Պլոճիկ—*երիկամունք (անասունների)։*
33. Պունունակ *կամ* սյուպունակ—*ծոծրակ։*
34. Սունդr—*ոտքի թաթերի հոդախաղերը։*
35. Սուrսուrիկ—*չորքոտանիների որկորը։*
36. Սունուռ *կամ* ճալալ *աղիք*—*բարակ աղիք։*
37. Սrքաճf—*անասունների նորածիններից հետո եկած փառը։*
38. Սrափդալ—*կրծքի ծայրի ոսկորը, որ պոչիկի ձևով իջնում է փորի մեջ։*
39. Վզի դոշեr—*անրաոսկորներ։*
40. Տռաղիf—*հետույքին կցված աղիքը։*
41. Փեճ *կամ* թիակ—*ուսոսկր։*
42. Փfլուճ—*միզափամփուշտ։*
43. Քarաճիկ—*երիկամունք (թռչունների)։*
44. Օղակ—*խռնչուկի վարի մասը։*

## ԲՈՒՍԱԿԱՆ ԵՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

### Ա. ԾԱՂԻԿՆԵՐ

*1. Աղբրանց արուն, 2. Գելկակաչ, 3. Գելպտուկ, 4. Գինարբ, 5. Գորտնծաղիկ, 6. Եզան աչք, 7. Ջամպուր, 8. Ծոթրին, 9. Կակաչ, 10. Կուժկոտրուկ, 11. Հորոտ-մորոտ, 12. Ձնծաղիկ, 13. Ճիտու գլեր, 14. Ճչնաբոր, 15. Մանուշակ, 16. Նավրուզ, 17. Նարգիզ, 18. Շուշան, 19. Սարի սմբուլ, 20. Վարդ, 21. Ցինկ, 22. Օձու թուր, 23. Օշոշ։*

### Բ. ՈՒՏԵԼԻ ԱՐՄՏԻՔՆԵՐ ԵՎ ԿԱՆԱՉԵՂԵՆ

*1. Ադմաթիթոն, 2. Աստղփուշ, 3. Ավելուկ, 4. Արջընկուզ, 5. Բազկիկ, 6. Բոզ, 7. Գինձ, 8. Գռզիկ, 9. Դաղձ, 10. Դդմաճ, 11. Երնջնակ, 12. Թթվարոշ, 13. Թրթնջուկ, 14. Ժախ, 15. Խաժըք, 16. Խանդոխ, 17. Խանեն, 18. Խավրծիլ, 19. Խնձորուկ, 20. Խռչու պլոր, 21. Խրխնդուկ, 22. Ծիթրեն, 23. Կանկար, 24. Կեռտուկ, 25. Կիծուկ, 26. Կոճղեզ, 27. Կոտեմ, 28. Ջիակոճղեզ, 29. Ճառճըռուկ, 30. Ճնճղուպաշար, 31. Ճռիկ, 32. Մաղդանոս, 33. Մանդակ, 34. Նվիկ, 35. Շաղգամ, 36. Շաղգմուկ, 37. Շոլ, 38. Ուրց, 39. Ջրկոտեմ, 40. Սիպեխ, 41. Սավդուկ, 42. Սիվտըկուկ, 43. Սունկ, 44. Տապղին, 45. Տատրակ, 46. Փառփառ, 47. Օղին։*

### Գ. ԶԱՆԱԶԱՆ ԲՈՒՅՍԵՐ ԵՎ ԲՈՒՍԱԽՈՏԵՐ

*1. Աղքաղքուկ, 2. Անոխ, 3. Առվույտ, 4. Ավելկոտրուկ, 5. Բաղեղ, 6. Բլթեմ, 7. Բնկի, 8. Գազ, 9. Գաղտիկուռ, 10. Գառան դմակ, 11. Գիզ, 12. Գորտնբուրդ,*

13. Գորտնուկ, 14. Գռեկան, 15. Դասոնք, 16. Եղան լեզու, 17. Եղիճ, 18. Երեքնուկ, 19. Թանթրվենի, 20. Իշկաթնուկ, 21. Լեզվըռճուկ, 22. Լոշտակ, 23. Լվի խոտ, 24. Խոլորս, 25. Խոշրուկ, 26. Խռնդատ, 27. Խռովխոտ, 28. Խտուտ, 29. Ծնեբեկ, 30. Կառ, 31. Կտքվեղիկ, 32. Կըծկծուկ, 33. Կոպղ, 34. Կորնգան, 35. Կորնգնուկ, 36. Կորնկուչղա, 37. Հաչիրաշ, 38. Հավածոր, 39. Հոսին, 40. Ձիագողիկ, 41. Ձկըրխոտ, 42. Ճլճլուկ, 43. Ճոմել, 44. Ճնճղու հինա, 45. Մամուռ, 46. Մատուտակ, 47. Մարոխ, 48. Մեղրածուծք, 49. Մկնփուշ, 50. Մորեմուկ, 51. Շան սխտորուկ, 52. Շերեփուկ, 53. Շոնդեռ, 54. Չլլուկ, 55. Պոչով փարչիկ, 56. Պոչուկ, 57. Սանամաքի, 58. Սեզ, 59. Սև սոնիճ, 60. Սղանգ, 61. Սպանդ(չ), 62. Վարժոխ. 63. Տատաշ, 64. Տորնուկ, 65. Տուղտ, 66. Ցորնուկ, 67. Փալախ խոտ, 68. Փսիկ, 69. Քապանակ, 70. Քարագործ, 71. Քոսա խոտ, 72. Օձու լեզու, 73. Օշինդր։

### Դ. ԾԱՌԵՐ

1. Ալաժարի, 2. Ալուճի, 3. Բարտի, 4. Բոծենխի, 5. Դառնչի, 6. Եղրդի, 7. Ընկույզի, 8. Թեղի, 9. Թղկի, 10. Խնձորի. 11. Կաղամախի, 12. Կաղնի, 13. Կանտոնի, 14. Կեչի, 15. Հացի, 16. Մամոխի, 17. Մասրենի, 18. Մոշի, 19. Նորգենի, 20. Շաքրենի, 21. Շլորի, 22. Ուռենի, 23. Պնդուկի, 24. Տանձի, 25. Փշատի, 26. Քարչնի։

### Ե. ԹՌՉՈՒՆՆԵՐ

1. Ագռավ, 2. Անգղ, 3. Աղավնի, 4. Աղգիխշո, 5. Անձեղ, 6. Արծիվ, 7. Արտուտ, 8. Արոս, 9. Բադ (վայրի), 10. Բազե, 11. Բլբուլ, 12. Գիլհավք (արծվի գիշատիչ տեսակը), 13. Գլիր-գլիր, 14. Դեղձանիկ, 15. Ջուղուռ, 16. Լակլակ, 17. Լոր, 18. Լորամարգի, 19. Ծիծառ, 20. Կաքավ, 21. Կիվիվ, 22. Կկու, 23. Կունդո (բու), 24. Կոռ-կոռ, 25. Կռունկ, 26. Զկնկուլ, 27. Ղազ (վայրի սագ), 28. Ճարեկ, 29. Ճիռկաքավ, 30. Ճընճուղ (Ապռնեկ), 31. Ճշնարոս, 32. Ճոլոր, 33. Մանկըռթեկիկ, 34. Շահե (բազեի մի տեսակը), 35. Ուրուր, 36. Պուպու (հոպոպ), 37. Ջրխոթան, 38. Ջրկռունկ, 39. Սարեկ, 40. Սրորիկ, 41. Տատրակ, 42. Տիուլիլ, 43. Ցախսարեկ, 44. Ցուրուր (ուրուր), 45. Օրոր։

### Զ. ԱՅԼԵՎԱՅԼ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

1. Աղվես, 2. Այծյամ, 3. Արջ, 4. Աքիս, 5. Գել, 6. Գիշերահավիկ (չղջիկ), 7. Եղնիկ, 8. Էրե, 9. Լապսարակ, 10. Լորտու, 11. Խաչափառ, 12. Խլուրդ, 13. Կարիճ, 14. Կինճ, 15. Կոտկիրիրա, 16. Կուղ, 17. Զմուկ, 18. Ճագար, 19. Մարդագել, 20. Մողողիկ, 21. Մուկ, 22. Ջրշուն (կուղբ), 23. Սկյուռ, 24. Վագր, 25. Վայրի կատու, 26. Վայրի ոչխար, 27. Փորսող, 28. Քարթաթոշ (դոդոշ), 29. Օձնի (ոզնի), 30. Օձ։

### Է. ՄԻՋԱՏՆԵՐ

1. Ականջմտուկ (սողսողիկ), 2. Բոռեզ, 3. Գենա, 4. Դզեզ, 5. Ջատկի բոլոճ, 6. Թսթան բոլոճ, 7. Լու, 8. Կիտուռ, 9. Ջիթորկ, 10. Ճանճ, 11. Մժիկ, 12. Մլիկ, 13. Մեզոն, 14. Շնաճանճ, 15. Ոջիլ, 16. Ոսկի դզեզ, 17. Պապուկ, 18. Սարանդոստիկ (սարդ), 19. Տիզ։

## ՄՇՈ ԱՇԽԱՐՀԻ ՄԻ ՔԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԲՈՒՅՍԵՐ

Բազմաթիվ են այն բույսերը, որոնց բուժիչ հատկության հետ ժողովուրդն անհիշատակ ժամանակներից ի վեր ծանոթ է։ Այդ ծանոթությունը, մեր կարծիքով, երկու ճանապարհով է ձեռք բերված, կամ ինքնաբերաբար, փորձերով, կամ նախնի հեքիմների ու բժիշկների միջոցով սովորած։
Մշո աշխարհի (Բուլանըխի շրջան) ամենից շատ ծանոթ և ընդարձակ ծավալով գործածության մեջ են գտնվել հետևյալ բույսերը, որոնք դեղիչ հատկություն ունեն։

### 1. ԱՂԲՐԱՆՑ ԱՐՈՒՆ (Anoplantus)

Թունդ կարմիր, թավշանման և գրավիչ գեղեցկություն ունեցող ծաղիկ է։ Սրա թերթիկները չորացնում, փոշիացնում և, իբրև ծարիր, աչքերն են քաշում։ Կանայք հավատացնում են, որ շատ առողջարար է աչքերի համար։

### 2. ԱՐԹՈԽԻԿ

Այս անունը չգիտենք հայերե՞ն է, թե՞ այլազգի բառ։ Բառարաններում չկարողացանք գտնել։ Ալիշանի «Հայբուսակ»-ում հիշատակված է իբրև բազմամյա բույս։ Սրա արմատը սաստիկ այրող հատկություն ունի,